

Զբաղվածության Կարգավորման 2019 Թվականի ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) մշակման և իրականացման ուղենիշային համարվող օրենսդրական հիմքը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքն է (այսուհետ՝ օրենք):

2. Ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել՝

1) Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ հեռանկարային զարգացման ծրագիր), որի հիմքում դրված չորս գերակայություններից, որպես առաջին, մատնանշվում է զբաղվածության ընդլայնումը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված նպատակներն ու գերակայությունները,

3) «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակները, մասնավորապես, «Նպատակ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ» նպատակը, այն է՝ խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար, ինչպես նաև 1-4-րդ նպատակները (Նպատակ 1. Ոչ աղքատությանը - Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր դրսևորումներով ու ձևերով, Նպատակ 2. Ոչ սովին - Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության և բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը, Նպատակ 3. Առողջություն և բարեկեցություն - Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից, Նպատակ 4. Որակյալ կրթություն - Ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները),

4) 2018թ.-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում» թեմայով հետազոտության արդյունքները:

3. Զբաղվածության պետական քաղաքականությունը մշակում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և իրականացնում ամենամյա ծրագրի միջոցով՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց հետ:


4. Ամենամյա ծրագրի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ ըստ առաջնահերթությունների կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների

զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածությունն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելուն, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը:


5. Տեղեկատվության հավաքագրման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2013-2017թթ. ցուցանիշները, Զբաղվածության պետական գործակալության գործունեությանը վերաբերող 2013-2017թթ. ցուցանիշները, Հայաստանի Հանրապետության գործատուների շրջանում իրականացված հետազոտության միջոցով աշխատուժի պահանջարկի ուսումնասիրության արդյունքները, Հայաստանի Հանրապետության կրթական հաստատություններում իրականացված հետազոտության միջոցով աշխատուժի առաջարկի առկա իրավիճակի և խնդիրների վերհանման արդյունքում ստացված տեղեկատվությունը:

6. Որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ դիտարկվել են ՀՆԱ ծավալը, ՀՆԱ ինդեքս դեֆլյատորը և ՀՆԱ իրական աճի տեմպը նախորդ տարվա համեմատ, որոնք ներկայացված են գծապատկեր 1-ում, 2-ում և 3-ում: Դիտարկվող 5 տարիների ընթացքում ՀՆԱ ծավալն ունեցել է տարեկան միջինը 4.1%, ՀՆԱ ինդեքս դեֆլյատորը ունեցել է տարեկան միջինը 1.92%, իսկ միջին տարեկան ՀՆԱ իրական աճի տեմպերը կազմել է 3.56%:


Գծապատկեր 1. ՀՆԱ ծավալը, միլիոն դրամ



Գծապատկեր 2. ՀՆԱ ինդեքս-դեֆլյատոր (ընթացիկ և համադրելի գներով ՀՆԱ-ի ծավալների հարաբերություն), %.




Գծապատկեր 3. ՀՆԱ-ի իրական աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, %.



7. Վերը ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշներն ուղղակիորեն փոխկապակցված են, ուստի աշխատաշուկայի վերլուծության և զբաղվածության պետական ծրագրերի պլանավորման ժամանակ կարևոր է դիտարկել մակրոտնտեսական ցուցանիշների, մասնավորապես, ՀՆԱ-ի և տնտեսական ակտիվության ազդեցությունը զբաղվածության ցուցանիշների վրա: Փոխադարձ ազդեցությունները դիտարկվել են կախվածության գծային մոտարկմամբ, որը նաև հնարավորություն է տալիս կատարել որոշակի կարճաժամկետ կանխատեսումներ և հասկանալ ոլորտում առկա խնդիրները:


8. Մակրոտնտեսական և զբաղվածության ցուցանիշների համեմատական վերլուծության շրջանակներում դիտարկվել է ՀՆԱ ծավալի և զբաղվածների թվաքանակի կորելացիոն կապը, որը ներկայացված է գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. ՀՆԱ ծավալի և զբաղվածների թվաքանակի կապը




9. Ունենք բավականին բարձր ճշտությամբ հակադարձ համեմատական կախում, երբ զբաղվածների թվի ավելացումը կարող է բերել ՀՆԱ ծավալի նվազման: Մեկ զբաղվածի հաշվարկով ստեղծված ՀՆԱ ծավալի չափը Հայաստանի Հանրապետության դրամով ներկայացված է գծապատկեր 5-ում: Այս ցուցանիշը տարիների ընթացքում աճել է տարեկան միջինը 7 %-ով:

Գծապատկեր 5. Մեկ զբաղվածի հաշվարկով ստեղծված ՀՆԱ ծավալի չափը, ՀՀ դրամ.



Գծապատկեր 6. Գործազուրկների և ՀՆԱ ծավալի փոխադարձ կապը




Այս դեպքում ևս գործում է հակադարձ համեմատական կախում, այսինքն՝ գործազուրկների թվի ավելացմանը զուգընթաց ՀՆԱ ծավալը նվազում է:

10. Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (SUS)¹ 2017 թվականի հունվար-դեկտեմբերին 7.7 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Անկում է գրանցվել միայն գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալներում: 2018թ. հունվար-հունիս ամիսներին, 2017թ. համադրելի ժամանակահատվածի համեմատ, Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 8.9%-ով:

11. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալների՝ հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին նպաստել է արդյունաբերական արտադրանքի, գյուղատնտեսության համախառն արտադրանքի, շինարարության, առևտրի շրջանառության և բնակչության մատուցված ծառայությունների ծավալների աճը: Այսպես, հունվար-հունիս ամիսներին արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 3.7%-ով, գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 5.5%-ով, շինարարությունը՝ 13.5%-ով, առևտրի շրջանառությունը՝ 9.1%-ով, իսկ բնակչության մատուցված ծառայությունների ծավալի աճը կազմել է 18.1%:

12. Կարևոր է համադրել նաև բնակչության տնտեսական ակտիվության, զբաղվածության և գործազրկության մակարդակների ցուցանիշները, որոնք ներկայացված են գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7. Բնակչության տնտեսական ակտիվության, զբաղվածության և գործազրկության մակարդակներ, %.




Ինչպես երևում է գծապատկեր 7-ից տնտեսական ակտիվության մակարդակի զգալի՝ 8.1% աճի պայմաններում զբաղվածության մակարդակը աճել է շատ փոքր՝ 0.1%-ով, իսկ գործազրկության մակարդակը նվազել է նույնպես փոքր՝ 0.2%-ով: Եթե դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում տնտեսական ակտիվության մակարդակը արձանագրել է

¹ 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել SUS-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական SUS-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական SUS-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:


տարեկան միջինը 1.2%-ով աճ, զբաղվածության և գործազրկության մակարդակները ունեցել են նվազման միտում տարեկան միջինը 0.35%-ով:

Գծապատկեր 8. Հայաստանի Հանրապետության բնակչության, աշխատանքային ռեսուրսների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը, հազար մարդ




13. Ինչպես երևում է գծապատկեր 8-ից, չնայած 2017թ.-ին 2016թ.-ի համեմատ բնակչության թվաքանակի 0.44%-ով նվազման, աշխատանքային ռեսուրսները և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն աճել է համապատասխանաբար 0.49%-ով և 0.37%-ով: Դիտարկվող ժամանակաշրջանում նշված երեք ցուցանիշները դրսևորում են ընդհանուր նվազման տենդենց, ինչը ներկայացված է գծապատկեր 9-ում:

Գծապատկեր 9. Հայաստանի Հանրապետության բնակչության, աշխատանքային ռեսուրսների և տնտեսապես ակտիվ բնակչության փոփոխությունը ըստ տարիների, %



14. Ինչպես երևում է գծապատկեր 9-ից, բնակչության թվաքանակը նվազել է տարեկան միջինը 0.23%-ով, աշխատանքային ռեսուրսները նվազել են տարեկան միջինը 1.72%-ով, իսկ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազել է տարեկան միջինը 2.19%-ով: Միաժամանակ պետք է նկատել, որ աշխատանքային ռեսուրսների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակների տեսակարար կշիռները բնակչության ընդհանուր թվաքանակում դիտարկվող ժամանակահատվածում արձանագրել է շարունակական նվազում՝ բացառությամբ 2017 թվականին: Այդ տվյալները ներկայացված են գծապատկեր 10-ում:


Գծապատկեր 10. Աշխատանքային ռեսուրսների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակների տեսակարար կշիռները բնակչության ընդհանուր թվաքանակում, %



Աշխատանքային ռեսուրսների և տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշռի նվազումը բնակչության ընդհանուր թվաքանակում վկայում է, որ երկրից հեռացողների հիմնական մասը հենց հանդիսանում են աշխատանքային տարիքի աշխատունակ անձինք, ինչը բերում է նաև տնտեսական ակտիվության որոշակի նվազման:

15. Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում զբաղվածների թվաքանակի փոփոխությունը ներկայացված է գծապատկեր 11-ում:


Գծապատկեր 11. Զբաղվածների թվաքանակը, հազար մարդ



Զբաղվածների թվաքանակը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է տարեկան միջինը 2.1%-ով, հատկապես զգալի է եղել նվազումը 2015-2016 թվականներին՝ մոտ 8.2%-ով, իսկ 2017 թվականին արձանագրվել է փոքր՝ 0.6%-ով աճ:

16. Զբաղվածների սեռային բաշխումը Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում ներկայացված է գծապատկեր 12-ում:


Գծապատկեր 12. Զբաղված կանանց և տղամարդկանց թվաքանակը, հազար մարդ



Ինչպես երևում է գծապատկեր 12-ից, ամբողջ ժամանակահատվածում զբաղված տղամարդկանց թիվը գերազանցել է զբաղված կանանց թվաքանակը միջինը տարեկան 7.7%-ով: Զբաղված կանանց թվաքանակը նվազել է տարեկան միջինը՝ 2.2%-ով, իսկ տղամարդկանց թիվը՝ մոտ 2%:

17. Զբաղվածների բաշխումն ըստ տարիքային խմբերի ներկայացված է գծապատկեր 13-ում:


Գծապատկեր 13. Զբաղվածները ըստ տարիքի, հազար մարդ.



Մինչև 29 տարեկան զբաղված երիտասարդների թիվը նվազել է տարեկան միջինը 3.44%-ով, իսկ 30 և ավելի տարիքի զբաղված անձանց թիվը տարեկան միջինը 1.67%-ով:

18. Զբաղվածների բաշխումն ըստ կրթական մակարդակի ներկայացված է գծապատկեր 14-ում:

Գծապատկեր 14. Զբաղվածներն ըստ կրթական մակարդակի, հազար մարդ (2017 թվականի տվյալները հրապարակված չեն):



Ինչպես երևում է գծապատկեր 14-ից, Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում զբաղվածների հիմնական մասը չունեն մասնագիտական կրթություն (միջինը ըստ տարիների՝ 47.9%), իսկ բարձրագույն կրթություն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական կրթություն ունեն համապատասխանաբար միջինը՝ 28.2%, 21.3% և 3%: Սակայն պետք է նկատել, որ բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը դիտարկվող ժամանակահատվածում աճել է տարեկան միջինը 3.2%-ով, իսկ առավել բարձր տեմպերով ավելացել է նախնական մասնագիտական կրթություն ունեցողների թվաքանակը՝ տարեկան միջինը 14.3%-ով: Միջին մասնագիտական կրթություն ունեցող և մասնագիտական կրթություն չունեցող զբաղվածների թիվը նվազել է համապատասխանաբար տարեկան միջինը՝ 4%-ով և 0.5%-ով: Ըստ էության, դիտարկվող ժամանակահատվածում աշխատաշուկայի պահանջարկը առավել մեծացել է նախնական մասնագիտական կրթություն ունեցող անձանց նկատմամբ, որոշ չափով ավելացել է բարձրագույն կրթություն ունեցողների համար, միջին մասնագիտական կրթություն ունեցողների համար կրճատվել է, իսկ մասնագիտական կրթություն չունեցողների համար այն գործնականում չի փոխվել:

19. Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում աշխատանք փնտրողների թվաքանակը ներկայացված է գծապատկեր 15-ում:


Գծապատկեր 15. Աշխատանք փնտրողների թվաքանակը, հազար մարդ (միջին ամսական ցուցանիշ).



Ինչպես երևում է գծապատկեր 15-ից, աշխատաշուկայում աշխատանք փնտրողների թիվն աճել է տարեկան միջինը 6.3%-ով: Այն նվազել է միայն 2017թ.-ին 2016թ.-ի համեմատ՝ մոտ 12%-ով:


20. Զբաղվածների բաշխումն ըստ պետական և ոչ պետական սեկտորի ներկայացված է գծապատկեր 16-ում: Ինչպես երևում է գծապատկեր 16-ից, պետական և ոչ պետական սեկտորներում 2011-2016 թվականներին արձանագրվել է զբաղվածների թվաքանակի կրճատում՝ համապատասխանաբար տարեկան միջինը 0.98%-ով և 2.95%-ով, ինչով և պայմանավորված ավելացել է պետական սեկտորում զբաղվածների տեսակարար կշիռը ոչ պետական սեկտորի զբաղվածների թվաքանակում՝ տարեկան միջինը 2.15%-ով:

Գծապատկեր 16. Զբաղվածների բաշխումն ըստ պետական և ոչ պետական սեկտորների, հազար մարդ




21. Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայում գործազուրկների թվաքանակի փոփոխությունը ներկայացված է գծապատկեր 17-ում, իսկ գործազուրկների սեռային բաշխվածությունը գծապատկեր 18-ում:

Գծապատկեր 17. Գործազուրկների թիվը, հազար մարդ



Ինչպես երևում է գծապատկեր 17-ից, գործազուրկների թիվը կրճատվել է տարեկան միջինը 2,56%-ով, ընդ որում՝ վերջին երեք տարիներին արձանագրվել է անընդհատ նվազում:


Գծապատկեր 18. Գործազուրկների սեռային բաշխվածությունը, հազար մարդ.



Ինչպես երևում է գծապատկեր 18-ից, գործազուրկ կանանց թվաքանակը 2011-2015 թվականներին գերազանցել է գործազուրկ տղամարդկանց թվաքանակին, սակայն 2016 և 2017 թվականներին տղամարդկանց շրջանում գործազրկությունը սկսել է գերազանցել կանանց գործազրկությանը: Չնայած այդ հանգամանքին, ամբողջ ժամանակահատվածի համար միջինը 4,03%-ով գործազուրկ կանանց թիվը բարձր է գործազուրկ տղամարդկանց թվից:

22. Գործազուրկների տարիքային բաշխումը ներկայացված է գծապատկեր 19-ում:


Գծապատկեր 19. Գործազուրկների տարիքային բաշխումը, հազար մարդ.



Ինչպես երևում է գծապատկեր 19-ից, երիտասարդ գործազուրկների թիվը նվազել է տարեկան միջինը 4,3%-ով, իսկ 30 և ավելի տարիք գործազուրկ անձանց թիվը՝ 1,3%-ով:

23. Գործազուրկների բաշխումն ըստ կրթական մակարդակների ներկայացված է գծապատկեր 20-ում:


Գծապատկեր 20. Գործազուրկների բաշխումն ըստ կրթական մակարդակների, հազար մարդ (2017 թվականի վերաբերյալ տվյալներ չեն հրապարակվել).



Ինչպես երևում է գծապատկեր 20-ից, բարձրագույն և նախնական մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների թիվն աճել է միջինը տարեկան 0.9%-ով և 28%-ով, միջին մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների թիվը կրճատվել է տարեկան միջինը 3%-ով, իսկ մասնագիտական կրթություն չունեցող գործազուրկների թիվը գործնականում չի փոխվել:


24. Հայաստանի Հանրապետության մարզերում գործազրկության մակարդակների համեմատական վերլուծության արդյունքները վկայում են մարզերի միջև գործազրկության մակարդակի զգալի տարբերությունների մասին: Հանրապետական միջին ցուցանիշից գործազրկության մակարդակը 2012-2016թթ.-ին բարձր է եղել Երևանում, Հայաստանի Հանրապետության Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերում: 2016թ.-ին նախորդ տարվա նկատմամբ գործազրկության մակարդակի աճ է գրանցվել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի (0.2 տոկոսային կետով), Արարատի (0.9 տոկոսային կետով), Արմավիրի (2.2 տոկոսային կետով), Շիրակի (2 տոկոսային կետով), Տավուշի (0.4 տոկոսային կետով) մարզերում (զձապատկեր 21):

Գծապատկեր 21. Գործազրկության մակարդակի բաշխվածությունն ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի



25. Գործակալության հետ համագործակցող գործատուների թվաքանակի փոփոխությունը ներկայացված է զձապատկեր 22-ում:


Գծապատկեր 22. Գործատուների հետ համագործակցող գործատուների թվաքանակի փոփոխությունը, հազար գործատու.



Այս ցուցանիշը ունեցել է տարեկան միջինը 24.2% աճ, ինչը բավականին դրական է, սակայն պետք է նկատել, որ վերջին երեք տարիներին այդ աճը զգալիորեն նվազել է՝ կազմելով միջինը 9.5%:

26. Գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թիվ և չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվ ներկայացված է գծապատկեր 23-ում:


Գծապատկեր 23. Գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թիվ և չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվ, հազար աշխատատեղ.



Գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թիվ տարիների ընթացքում ունեցել է տարեկան միջինը 2.8% աճ, իսկ չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը ունեցել է փոքր՝ 0.3% աճ:

27. Գործակալության գործունեության, այդ թվում՝ գործատուների հետ համագործակցությունը բնութագրող առանձին ցուցանիշներ ներկայացված են գծապատկեր 24-ում:

Գծապատկեր 24. Գործատուների և գործակալության համագործակցությունը բնութագրող ցուցանիշներ



Գծապատկեր 24-ից հետևում է, որ գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի միջին ամսական թիվը 2012-2016թթ. ընկած ժամանակահատվածում ամենացածր ցուցանիշ է գրանցել 2014թ.-ին (2007): Նշված ցուցանիշը 2014թ.-ին նախորդ տարվա նկատմամբ նվազել է 22%-ով, 2015-2016թթ. այդ ցուցանիշը դրսևորել է աճի միտում և 2016թ.-ին կազմել է 2778, նախորդ տարվա նկատմամբ աճելով 17.3%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում կայուն աճ է դրսևորել նաև գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թվաքանակը, բացառությամբ 2014թ.-ի (2014թ.-ին ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 9.2%-ով): 2016թ.-ին գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թվաքանակը կազմել է 17513: Գործակալություն ներկայացված չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը 2011-2012թթ.-ին աճել է, այնուհետև սկսել է նվազել և 2015թ.-ին կազմել 7225, 2016թ.-ին՝ 7884:

28. 2016թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում տարեսկզբից ընդգրկվել է 7836 աշխատանք փնտրող անձ: Ըստ գործակալության տվյալների, 2017թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ՝

1) գործազուրկների թվաքանակը կազմել է 75452 մարդ.

2) գործազուրկների 4.3%-ը հաշմանդամություն ունեցող անձինք են.

3) տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել գործակալությունում հաշվառված՝ ա. աշխատանք փնտրողների 5.3%-ը կամ 4767 մարդ,


բ. առաջին անգամ աշխատանք փնտրողների 5.2%-ը կամ 2006 մարդ.

4) գործակալությունը տարեսկզբից համագործակցել է 17841 գործատուների հետ, որոնցից թափուր աշխատատեղերի հայտ է ներկայացրել 1964 գործատու, հավաքագրված չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 5419, որից նոր ստեղծված աշխատատեղերի թիվը եղել է 193:

29. 2018թ.-ին իրականացված «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում» թեմայով հետազոտության շրջանակներում ուսումնասիրություններ են կատարվել նաև գործատուների և կրթական հաստատությունների շրջանում: Իրականացված հետազոտության տվյալներով հարցմանը մասնակցած գործատուների մոտ աշխատողների միջին թիվը կազմել է 38 աշխատող, ընդ որում՝ նրանց 71%-ը եղել են կանայք, իսկ 29%-ը՝ տղամարդիկ: Աշխատողների 63%-ը ունեցել է բարձրագույն կրթություն, 22%-ը՝ միջին մասնագիտական, 2%-ը՝ նախնական մասնագիտական և 13%-ը չեն ունեցել մասնագիտական կրթություն: Աշխատողների 91%-ը եղել է մինչև կենսաթոշակային տարիքի, իսկ մնացած 9%-ը՝ կենսաթոշակային տարիքի:


30. Գծապատկեր 25-ից երևում է, որ գործատուների մոտ գերակշռում է աճ ունենալու կանխատեսումը՝ 46.1%, սակայն բավականին մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև այն գործատուները, ովքեր դժվարացել են պատասխանել՝ 33.6%:

Գծապատկեր 25. Գործատուների կանխատեսումը առաջիկա երեք տարիներին իրենց արտադրության ծավալների փոփոխության մասին, %.



31. Գծապատկեր 26-ում ներկայացված է գործատուների գնահատականը սեփական արտադրության (մատուցվող ծառայությունների) սպառման վերաբերյալ:


Գծապատկեր 26. Սպառման գնահատականը գործատուների կողմից, %.



Սպառման միջին կշռված միավորը կազմել է 3.59 միավոր կամ 72% բավարարվածություն սպառումից:

32. Գործատուները կանխատեսել են նաև իրենց կազմակերպություններում աշխատողների թվաքանակի փոփոխությունն առաջիկա երեք տարում:

Գծապատկեր 27. Աշխատողների թվաքանակի փոփոխությունը առաջիկա երեք տարիներին, %.




Ինչպես երևում է գծապատկեր 27-ից, այս դեպքում արդեն գերակշռում է աշխատողների թվաքանակի անփոփոխ մնալու տեսակետը՝ 36.7%, չնայած այն հանգամանքի, որ աճ կանխատեսող գործատուները եղել են ավելի շատ՝ 25.8%, նվազում կանխատեսող գործատուների համեմատ՝ 10.2%: Այս դեպքում ևս գործատուների մի զգալի մասը դժվարացել է պատասխանել՝ 27.3%:

33. Գործատուների մոտ 60%-ը ներկայացրել են թափուր աշխատատեղեր, ընդ որում՝ ներկայացված թափուր աշխատատեղերի մոտ 25%-ը պահանջում է բարձրագույն կրթություն, 20%-ը՝ միջին մասնագիտական կրթություն, 30%-ը՝ նախնական մասնագիտական կրթություն և 25%-ը մասնագիտական կրթություն չի պահանջում: Գործատուների 14%-ը նշել են, որ առաջիկա 3 տարիներին նախատեսում են ստեղծել նոր աշխատատեղեր, ընդ որում՝ նոր ստեղծվող աշխատատեղերի մոտ 28%-ը նախատեսում է բարձրագույն կրթություն, 18%-ը՝ միջին մասնագիտական կրթություն, 22%-ը՝ նախնական մասնագիտական կրթություն, իսկ 32%-ը մասնագիտական կրթություն չի պահանջում:


34. Հայաստանի Հանրապետության կրթական հաստատություններում իրականացված հետազոտության արդյունքում կրթության որակի ապահովման տեսանկյունից ուսումնական հաստատությունում իրականացվող ուսումնական գործընթացների առանձին բաղադրիչների գնահատականը դասախոսների կողմից այնքան էլ բարձր չի եղել՝ հինգ դասախոսից մեկը ցածր է գնահատել կրթական հաստատությունում ընթացող գործընթացները: Կրթական գործընթացների առանձին բաղադրիչներից դասախոսներն առավել ցածր գնահատել են լաբորատոր պարապմունքները և պրակտիկները (գործընթացներ, որոնք ձևավորում են սովորողի մոտ գործնական կարողություններ): Դասախոսները գնահատել են սովորողների մասնագիտական գիտելիքները դրական՝ 75.2%, իսկ գործնական կարողությունները՝ 68.2%: Միաժամանակ, դասախոսների 88%-ը գտնում է, որ սովորողները կարիք կունենան ուսումնական ավարտելուց հետո աշխատանքային գործունեություն իրականացնելու համար լրացուցիչ վերապատրաստման: Կրթական գործընթացում նույն թույլ տեղերը նշել են նաև ուսանողները: Ըստ նրանց առավել խոցելի են գործնական պարապմունքները և լաբորատոր աշխատանքները, կրթական ծրագրերում ինովացիոն գործընթացների թույլ արտացոլումը, հետազոտական աշխատանքների իրականացումը և այլն: Սովորողների 22%-ը համատեղում է ուսումը և մշտական աշխատանքը, ևս 9%-ը աշխատում է ժամանակ առ ժամանակ, իսկ 5%-ն իրականացնում է կամավորական աշխատանք: Հատկանշական է, որ սովորողների 86%-ը նույնպես գտնում է, որ ուսումնական ավարտելուց հետո աշխատանքային գործունեություն

իրականացնելու համար կպահանջվի լրացուցիչ վերապատրաստում: Այսպիսով, կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ աշխատուժի առաջարկի առկա իրավիճակը բնորոշվում է աշխատաշուկայում պահանջարկի հետ որոշակի շեղումներով (գծապատկեր 28), իսկ հիմնական խնդիրը հանդիսանում է սովորողների մոտ գործնական կարողությունների պակասը, ինչն ուղղակիորեն ազդում է որակյալ աշխատուժի ձևավորման վրա: Եթե համադրելու լինենք այս ցուցանիշները կրթական հաստատությունները նշված տարիներին ավարտած և աշխատաշուկա մուտք գործած մասնագետների հետ, ապա կտեսնենք, որ աշխատաշուկայի առաջարկը՝ ըստ մասնագիտական կրթությունների մակարդակների և զբաղվածներն աշխատաշուկայում (պայմանական պահանջարկ) ունեն որոշակի անհամապատասխանություն (գծապատկեր 28 և 29):

Գծապատկեր 28. Կրթական հաստատություններն ավարտած և աշխատաշուկա մուտք գործող (առաջարկ) և զբաղվածներ (պայմանական պահանջարկ) համամասնությունը, %-ով.



Գծապատկեր 29. Առաջարկի և պահանջարկի անհամամասնությունը՝ ըստ տարիների (առաջարկ հանած պայմանական պահանջարկ), %-ով.



Ինչպես երևում է գծապատկեր 28-ից և 29-ից, բարձրագույն կրթական հաստատություններն ավարտածների տեսակարար կշիռը 2012թ.-ին զգալիորեն գերազանցել է նույն թվականին բարձրագույն կրթություն ունեցող զբաղվածների տեսակարար կշիռը, սակայն այդ անհամամասնությունը տարիների ընթացքում կրճատվել է և արդեն 2016թ.-ին գործնականում ձևավորվել է բավականին բարձր համապատասխանություն: Բավականին բարձր է համապատասխանությունը նաև նախանական մասնագիտական կրթության ոլորտում, իսկ միջին մասնագիտական կրթության ոլորտում 2012թ.-ին եղել է բավականին մեծ անհամապատասխանություն (առաջարկը զիջել է պայմանական պահանջարկին 23.6%-ով), սակայն հետագայում այդ անհամապատասխանությունը նույնպես գործնականում վերացել է՝ կազմելով 3.6%:

35. Գործատուների շրջանում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ երիտասարդ մասնագետի համար պահանջվող ընդհանուր գիտելիքների ու կարողությունների մասով գործատուները հատկապես կարևորել են երիտասարդների շփվելու, տեղեկություններ գտնելու, վերլուծելու, սեփական մտքերը գրավոր և բանավոր վարժ ներկայացնելու, սեփական դիրքորոշումը հիմնավորելու, էթիկայի կանոնները պահպանելու կարողությունները: Իսկ մասնագիտական գիտելիքների և կարողությունների մասով կարևորվել են մասնագիտական տեսական գիտելիքները, մասնագիտական գործունեության հետ կապված համակարգչային ծրագրերի իմացությունը, մասնագիտության ոլորտում ընթացիկ խնդիրների բացահայտումը և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, մասնագիտական աշխատանքի ժամանակ նոր արդյունքներ ստեղծելու կարողությունը: Ընդունելով երիտասարդ մասնագետին աշխատանքի՝ գործատուները հանդիպում են տարբեր խնդիրների, որոնցից առավել էականը՝ ըստ գործատուների, աշխատանքային փորձի պակասն է, գործնական կարողությունների պակասը և տեսական թույլ գիտելիքները: Գործատուները ներկայացրել են նաև իրենց տրամադրվածությունը երիտասարդ մասնագետներին աշխատանքի ընդունելու վերաբերյալ: Նրանց կողմից կատարվել է 1-ից 10 միավորանոց գնահատում և ընդհանրական գնահատականը կազմել է 7.73 միավոր կամ աշխատանքի ընդունելու հավանականությունը 77.3%: Գործատուները գնահատել են նաև երիտասարդ մասնագետների տեսական գիտելիքները և գործնական կարողությունները նույն գնահատման սանդղակով: Այդ գնահատականները կազմել են տեսական գիտելիքների համար՝ 6.56 միավոր, գործնական կարողությունների համար՝ 6.09 միավոր, որոնք միջին գնահատականներ են:

36. Հաշվի առնելով զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով հեռանկարային զարգացման ծրագրում և զբաղվածության ռազմավարության մեջ սահմանված նպատակներն ու թիրախները՝ 2018թ.-ի համար առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները.

1) Հայաստանի աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի քրոնիկ անհամապատասխանությունը, գործազրկության բարձր մակարդակը.

2) աշխատաշուկայի տարածքային անհամամասնություններով պայմանավորված առանձին տարածաշրջաններում գործազրկության մակարդակների էական տարբերությունների առկայությունը.

3) աշխատաշուկայում անմրցունակ անձանց զբաղվածության ապահովման դժվարությունները.

4) կանանց շրջանում գործազրկության բարձր մակարդակը.

5) առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների աշխատանքի տեղավորման հնարավորությունների ցածր մակարդակը.

6) Հայաստանում ոչ ֆորմալ զբաղվածության բարձր մակարդակը:

Վերը նշված հիմնախնդիրներով է պայմանավորված Հայաստանի աշխատանքի շուկայի կարևոր առանձնահատկությունը՝ աշխատանքային միգրացիայի բարձր ցուցանիշները:

37. Ամենամյա ծրագրում ներառված են հետևյալ ծրագրերը և ծառայությունները.

1) *Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում*

ա. ծրագրի նպատակն ունկնդրին աջակցելն է աշխատաշուկայի պահանջների համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, աշխատանքից ազատման ռիսկի նվազեցման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում,

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատագրված ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձինք, որոնք առնվազն երեք ամիս գտնվում են գործազուրկի կարգավիճակում,

գ. մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված գործազուրկին ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ,

դ. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք.

2) *Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում*

ա. ծրագրի նպատակն է գործատուի կողմից անմրցունակ անձանց տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը,

բ. ծրագրի շահառուները հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

գ. հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ ուղեկցողի կարիք ունեցող անձանց ուղեկցող ունենալու համար տրվում է դրամական օգնություն մինչև վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով.

3) *Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում*

ա. ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են, որոնք ունեն մասնագիտական կրթություն և որակավորում,

գ. ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, իսկ գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը փոխհատուցելու համար,

դ. ծրագրի տևողությունը 3 ամիս է,

ե. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվածների առնվազն 20%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք.

4) Աշխատանքի տրամադրման կազմակերպում

ա. ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով, մի կողմից՝ աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղի արդյունավետ համալրումը,

բ. ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները,

գ. ծրագիրը մեկօրյա միջոցառում է, որն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով:

5) Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում

ա. ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի և, հատկապես, բժիշկների և ուսուցիչների թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն են գործազուրկները,

գ. ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են հետևյալ ծախսերը՝ շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսը, շահառուի և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսը,

4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը,

միանվազ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,

ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով,

աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից մինչև 100 տոկոսի չափով, մեկ տարի ժամկետով, հաշվի առնելով թափուր աշխատատեղերի՝ ըստ մասնագիտությունների լրացման առաջնահերթությունները, ընդ որում, ըստ մասնագիտությունների աշխատավարձի հավելման չափերը հաստատված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի N 82-Ա/1 հրամանով,

դ. ծրագրի տևողությունը 3 տարի է:

6) *Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում*

Ծրագրում ներառված են հետևյալ 2 ենթածրագրերը՝

աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին:

Նշված երկու ենթածրագրերն աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կարող են իրականացվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման N 8 հավելվածի պահանջները,

ա. ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը,

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են.

գ. 1-ին ենթածրագրի շրջանակներում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին տրամադրվում է միանվագ փոխհատուցում՝ 50.0 հազ. դրամից մինչև 200.0 հազ. դրամի չափով, իսկ 2-րդ ենթածրագրում ընդգրկված յուրաքանչյուր անձի համար գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման նպատակով փոխհատուցվում են աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաների, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը, որը մեկ անձի համար չպետք է գերազանցի հինգ հարյուր հազար դրամը:

7) *Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում*

ա. այցելության համար դրամական օգնության տրամադրման նպատակն է անմրցունակ անձանց ակտիվացումը, ինքնուրույն աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը,

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

գ. դրամական օգնությունն անմրցունակ անձանց տրամադրվում է ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման N 18 հավելվածով սահմանված չափերին համապատասխան՝ գործատուին այցելելու հետ կապված տրանսպորտային, ինքնակենսագրության կազմման, գործատուին պատշաճ մակարդակով ներկայանալու նպատակով իրականացվող ծախսերի որոշակի մասը փոխհատուցելու համար,

դ. ծրագրի առավելագույն տևողությունը երեք ամիս է.

8) *Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում*

ա. ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը,

բ. ծրագրի շահառուներն են աշխատաշուկայում անմրցունակ և առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակում գտնվող անձինք,

գ. ծրագրի շրջանակներում ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցությունն (խորհրդատվություն, ուսուցում, գործարար ծրագրի մշակում և վերջինիս իրականացման ուղեկցում) իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպության կողմից: Կազմակերպությունը մեկ տարի անընդմեջ, ըստ անհրաժեշտության, աշխատում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցություն ստացած շահառուի հետ,

դ. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 26%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք.

9) *Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով հանրապետության առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով՝ գյուղացիական տնտեսություններին աջակցելը,

բ. ծրագրի շահառուները մինչև 3 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող աշխատաշուկայում անմրցունակ անձինք են, որոնց ընտանիքի անդամներն ընդգրկված չեն գյուղատնտեսության ոլորտում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող պետական աջակցության ծրագրերում, ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության լեռնային կամ բարձրլեռնային կամ սահմանամերձ գյուղական բնակավայրերում,

գ. ծրագրի շրջանակներում առաջնահերթությունը տրվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացված մշակաբույսերի մշակման ծրագրերի իրականացմանը,

դ. հողօգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե նրա՝

ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և անապահովության միավորը բարձր է 0-ից,

ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս,

ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է,

ընտանիքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիք է:

ե. ծրագրի շրջանակներում իրականացվում է աջակցություն ակնկալվող գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի և իրականացման համար (խորհրդատվություն, գյուղացիական տնտեսությանն աջակցության գործարար ծրագրի անբաժանելի մաս կազմող՝ կատարման ենթակա աշխատանքների պլան-ժամանակացույցի մշակում, գյուղատնտեսության ոլորտին առնչվող խորհրդատվության տրամադրում՝ ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում, ինչպես նաև հողօգտագործողի՝ հարկային գործակալի պարտավորություններից բխող գործառույթների մասով):

10) Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործադուրի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում

ա. ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ և առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի աշխատանքային ունակությունների ու կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,

